

23e


Պրովետարները բոլոր յերկրներին, միացե՛ք.

Ա. ԳՈՐՆԵՎ




ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԳԻՏԵՆԱ ԱՄԵՆ ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ

(ՄՈՊՐ-ի անդամի հիշատակարանը)



ՄՈՊՐ-ի ՀԵՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԵՑ. № 5

ՅԵՐԵՎԱՆ 1927



Ա. ԳՈՐՆԵՎ

327.321

16009
A I 4040

**ԻՆՉ ՊԵՏՔ Ե
ԳԻՏԵՆԱ ԱՄԵՆ ՄԻ
ԳՅՈՒՂԱՑԻ**

(ՄՈՊՐ-ի անդամի հիշատակարանը)



ՄՈՊՐ-ի ՀԱՅԵՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԸՏ. № 5

ՅԵՐԵՎԱՆ 1927

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1274.

ԳՐԱՌ. 907 Բ., ՏԻՐԱԺ 8000.

ԻՆՉՊԵՍ Ե ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Մեր պետությունն աճում է ու ամրապընդվում: Ապրելը շատ հեշտանում է: Ընդամենը մի քանի տարի յե անցել կապիտալիստական յերկրների մեր դեմ սկսած պատերազմը վերջանալուց հետո, և մենք արդեն կարողացել ենք վտաքի կանգնել:

Մեր յերկրի տնտեսությունը բարձրանում է, գործարաններն ու զավոդները բանում են, գյուղական տնտեսությունը զարգանում է:

Խոսք չկա, ի հարկե, վոր գյուղացին դեռ շատ բանի պակասություն ունի: Բայց չե՛, ախար մի քանի տարվա մեջ հո հնարավոր չե՞ ամեն բան անել, բացի դրանից մեր յերկիրը միշտ ել աղքատ է յեղել մյուսներից: Այնուամենայնիվ շատ ենք փորձվել և կարիքն ել առաջվա նման մեծ չի: Կարիք կա՞ ասելու, թե 1920—21 թվականներից ինչքա՞ն ենք առաջ գնացել:

Շինարարական մեծ աշխատանք է կատարվում և որ որի վրա ապրելը շատ ավելի հեշտանում է: Խորհրդային իշխանության ամենա-

մեծ հոգսն ե բարելավել գյուղացու գրություն-
նը, վերահաս լինել նրա կարիքներին. խոր-
հըրդային ամբողջ աշխատանքն ու քաղաքա-
կանությունը այդ բանին ե ձգտում միայն:
Միայն այն մասին են խոսում, թե ինչպես
ոգնեն գյուղացուն: Իսկ ամենագլխավոր բանն
այն ե, վոր մեզ մոտ մեր բանվորա-գյուղա-
ցիական իշխանությունն ե—ծանոթ ե ժողո-
վուրդի կյանքին, և չբանվորության շահերը
թանգ են նրա համար:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐ—ԳՅՈՒ-
ՂԱՑԻՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵ-
ՐՈՒՄ.

Արդյոք նույն բա՞նն ե կատարվում ուրիշ
յերկրներում:

Արդյոք այսպե՞ս ե ապրում մեր յեղբայր-
գյուղացին այն յերկրներում, ուր իշխանու-
թյունը բուրժուազիայի ձեռքին ե: Վո՛չ,
այնտեղ չինարարական աշխատանք չի տար-
վում, տնտեսությունը չի՛ վերականգնվում,
այլ ավելի ու ավելի յե ավերվում:

Կառավարության, տիրող հարուստ դասա-
կարգի և կալվածատերերի հալածանքն ու շա-
հագործումը շարունակ ավելի յե ուժեղանում:

Յեթե մինչև պատերազմն եւ գյուղացին այն-
տեղ թշվառ եր, աղքատ ու իրավազուրկ, հա-
պա համաշխարհային պատերազմից հետո,
վոր 30 միլիոն մարդ տարավ (այսինքն ամեն
հարյուրից մոտ 2 մարդ), գյուղացու դրու-
թյունը շատ ավելի վատացավ:

Բազմաթիվ գորահավաքներ, ուժից վեր
հարկեր, հողասակավություն—ասա ինչպես ե
մյուս յերկրներում, ուր դեռ ևս իշխանության
գլուխ են կանգնած գործարանատերերն ու
կալվածատերերը: Ու գյուղացին ինչպես վոր
ստրուկ եր, այնպես ստրուկ եւ մնացել ե:

ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՃՆՇՄԱՆ ԴԵՄ.

Լուում ու հնազանդվում ե գյուղացին:
Վո՛չ, չի լուում: Պայքարում ե հողի, ազատու-
թյան և աղատ կյանքի համար. (ընդվզում ե)
խռովություն ե կազմակերպում:

Արյունով ազատություն ե գնում իր հա-
մար: Ամբողջ աշխարհում հեղափոխական
շարժում ե առաջ յեկել: Բայց բուրժուազիան
շատ միջոցներ ունի հեղափոխական շարժումը
խեղդելու—և քանակ, և վոստիկանություն, և
դատարան, և որենք: Հեղափոխական բանվոր-

ներին ու գյուղացիներին ջնջելու շատ հնարներ
կան: Ուստի և այնտեղ բանվորներն ու գյու-
ղացիները դեռ հարուստին չեն հաղթել և
խշխանությունը դեռ իրենց ձեռքը չեն առել:
Սա հեշտ բան չէ: Ճնշման դեմ ապստամբելու
ամեն մի այդպիսի փորձին—բուրժուազիան
ապստամբանում է կախաղաններով, բանտերով,
տաժանակիր աշխատանքներով, աքսորով:

Այ, հենց սա է, վոր կոչվում է սպիտակ
տերոր: Սպիտակ տերոր նշանակում է իսպառ,
ընդհանրական բնաջնջում այն բանվորների ու
գյուղացիների, վորոնք դուրս են գալիս պայ-
քաբելու իրենց ծանր դրուժյունը բարեկամելու
համար: Դաշտերում ցրված են տանջված գյու-
ղացիների դիակները: Բանտերը լիքն են ապրա-
սամբ ժողովրդով: Տանջանքներով ու խիստ
լիկանքներով բուրժուազիան ու նրա ստոր ար-
բանյակներն ուղղում են ստիպել գյուղացուն,
վոր նա հաշտվի իր դատը վիճակի հետ: Դեռ
շատ զոհ է հարկավոր, մինչև վոր պրոլետա-
րիատն ու գյուղացիությունը հաղթեն, ամբողջ
աշխարհում արդար կյանք հաստատեն: Գյու-
ղացիության ամենալավ զավակներից դեռ շատ
հազարավորները կռնեն իրենց կյանքը այդ
գործի համար, կփթեն բանտերում, դեռ շատ
վորեր ու ալրիներ կմնան:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵՆՔ ԱՐԴՅՈՔ ՄԵՐ ՅԵՂ-
ԲԱՅՐ-ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻՆ, ՎՈՐՈՆՔ ԿՈՎՈՒՄ
ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Կարող է արդյոք մեր յերկրի գյուղացին
հանգիստ ու անտարբեր դիտել, թե ինչպես են
տանջում իր յեղբայրներին: Մենք դեռ հիշում
ենք են նոր անցած ժամանակը, յերբ կաղակի
մարտիկը (շահում) շրպպում եր գյուղացու թի-
կունքին և հողապետը ժողովրդի հետ այնպես եր
վարվում, ինչպես անասունի: Բացի դրանից ա-
մեն մի գյուղացի ել հասկանում է, վոր հեղա-
փոխությունը ինչքան շուտ հաղթի մյուս յեր-
կրներում, ինչքան շուտ բանվորա-գյուղացիա-
կան իշխանությունը հաստատվի այնտեղ, այն-
քան ավելի շուտ մեր կյանքը կբարելավվի, մեր
անտեսությունը կամրապնդվի: Արեւմտյան
յերկրները մեզնից և ավելի հարուստ են և
ավելի կուլտուրական և յեթե այնտեղ աշխա-
տանքի իշխանություն լիներ, մեզ մեծ ոգնու-
թյուն ցույց կտային: Ու պատերազմ ել չեր
լինի: Գյուղացիք ի՞նչ բան ունեն իրար դեմ
հռվելու: Ու մեր հարստությունների փոխարեն
մեքենաներ ու ապրանք կբերեյինք այնտեղից:
Դրա համար ել, միայն կաբեկցությունը չե՛,
այլ մեր շահն է մղում մեզ ոգնելու ուրիշ յեր-

կրներ ժեր յեղբայր գյուղացիներին, վորոնք տանջվել են պայքարում: Դա հարյուրապատիկ հետ կատանանք: Ահա այդ մասին և հոգում Հեղափոխության Մարտիկներին ոգնող միջազգային կազմակերպությունը, վոր կարճ կերպով կոչվում է «ՄՈՊՐ»*):

ԻՆՉ Ե ՄՈՊՐ-Ը ՅԵՎ ՈՒՄ Ե ՈՓՆՈՒՄ ՆԱ.

ՄՈՊՐ-ը դա բանվորների ու գյուղացիների մի կազմակերպություն է, վոր ոգնում է սահմանից են կողմն յեղող յեղբայրներին:

ՄՈՊՐ-ը ոգնում է քոլոր հեղափոխականներին առանց ազգի խտրության, յեթե միայն նրանք մասնակցել են պայքարին և սպիտակ տերրորի գոհ են:

ՄՈՊՐ-ը ոգնում է բանվորներից և գյուղացիներից այն ընկերներին, ով տանջվել է պայքարում, ով բանտ է ձգվել (քաղաքական բանտարկյալներ են կոչվում), դատապարտվել է տաժանակիր աշխատանքի, աքսորի, ում առողջությունը տանջանքով ու չարչարանքով խախտվել է, հաշմանդամ է դարձել, ու պետք է փախչի իր հայրենիքից, վորովհետև հալածում են:

*) Այդ բառերի — (ուսերեն) սկզբնատառերից է կազմված Ման. Թարգմ.

Մ Ո Պ Ր-ը ոգնում է և հեղափոխության մարտիկ բանվորներին ու գյուղացիներին ընտանիքներին. նրա կնոջը, յեթե ընտանիքը կերակրողին յերկար ժամանակով քչել են, այրուն, յեթե ամուսնուն անսահման կերպով տանջել են, և վորք յերեխաներին, վոր անհաց են մնացել:

Սա մեծ ու դժվար գործ է, վորովհետև բուրժուազիան բանվորներին ու գյուղացիներին տանջում է հազարներով և տասնյակ հազարներով: Բայց ասած է. «Գեղ կանգնի, գերան կկոտրի»: Մ Ո Պ Ր-ի անդամ միլիոնավոր բանվորներն ու գյուղացիներն իրենց շահի-ներով մեծ փող են հավաքում և մեծ ոգնություն են ցույց տալիս:

Միայն բանտերում մոտ 100 հազար բանվորներ ու գյուղացիներ են տառապում ու իրենց պատիժը քաշում նրա համար, վոր համարձակվել են պայքար մղել ավելի լավ կյանքի համար: Բա ինչքա՞ն են սպանվել ու տանջվել: Ինչքա՞ն այրիներ ու վորքեր կան:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԱՆԻ Մ Ո Պ Ր-Ի ԱՆԴԱՄԸ

Այս բոլոր ասածներից հասկանալի չէ, թե ի՞նչու ամեն մի ազնիվ աշխատավոր պետք է Մ Ո Պ Ր-ի անդամ լինի, ի՞նչու ամեն մի գյուղացի պետք է իր փոքրիկ տնտեսությունից մի յերկու

կոպեկ կտրի, բանտում տառապեղ իր յեղբայր
—գյուղացու համար: Իսկ ի՞նչ պետք է անի
ՄՈՊՐ-ի անդամը:

Յեթե գյուղում ՄՈՊՐ-ի բջիջ չկա, դու
պետք է կազմակերպես, ու այնպես, վոր վոչ
թե թղթի վրա հաշվվի, այլ վոր գործ անի: Ահա
ինչ է գրում մեզ Իվան Պավլով անուանով մի գյու-
ղացի «Մեր գյուղի բջիջում 95 մարդ կա: Անդա-
մավճարը տալիս են կանոնավոր: Գյուղացիք
ՄՈՊՐ-ի ոգտին մի դեսյատին հաճաք ցանեցին:
Մի ամսում յերկու յերեկույթ կազմակերպե-
ցինք և փողը ՄՈՊՐ-ին տվեցինք: Սպիտակ
տերրորի մասին գրականություն ենք դուրս
գրում (ամեն մի անդամին հինգ կոպեկին մի
դիրք), խրճիթ-ընթերցարանում ՄՈՊՐ-ի ան-
կյուն ենք սարքել և այլն»: Ա՛յ, ինչ կնշանակի
գործ անող բջիջ: Բջիջ կազմակերպելու հա-
մար, առաջ պետք է գյուղացիներին բացատրել,
—ինչով է զբաղվում ՄՈՊՐ-ը, ում է ոգնու-
թյուն ցույց տալիս, մեր յեղբայրներն ինչպես
են ապրում կապիտալի յերկրում:

Դու պետք է ինքդ ուսումնասիրես և ուրիշ-
ներին բացատրես այն յերկրների հեղափոխա-
կան շարժման մասին, ուր կառավարում են
կապիտալիստներն ու կալվածատերերը. խո-

սես սպիտակ տերրորի և Մ Ո Պ Ր-ի մասին: Դրա
համար պետք է բերել տալ Մ Ո Պ Ր-ի հանդեսը,
խրճիթ-ընթերցարանում Մ Ո Պ Ր-ի անկյուն
սարքել:

Պետք է անդամավճարդ կանոնավոր վճա-
րես և ուրիշներին ել հորդորես, վոր վճարեն,
վորովհետև մի՛ մոռանար, վոր քո տված հինգ
կոպեկը սովամահուլթյունից փրկում է քո յեղ-
բորը:

Մի գյուղացի, վոր հողային գործերով
Մոսկվա յեր յեկել, իրենց գյուղի Մ Ո Պ Ր-ի
բջիջի մասին նա պատմում էր. «Մ Ո Պ Ր-ի
բջիջը ամեն շաբաթ ժողով է անում, ուր շրը-
ջանից կամ գավառից յեկած ընկերներ, կամ թե
հենց մեր տղաներից զեկուցում են կապիտալի
յերկրների սպիտակ տերրորի մասին, գյու-
ղացիների մղած պայքարի մասին հողի և ի-
րենց իշխանուլթյան համար: Գյուղական բոլոր
ժողովներում ու հավաքուլթներում Մ Ո Պ Ր-ի
հարցը դրվում է և յերկու ամսում բջիջի ան-
դամները յերեք անգամ շատացել են: Խրճիթ-
ընթերցարանում Մ Ո Պ Ր-ի անկյուն կա կազմա-
կերպած ու այդ անկյունում սպիտակ տերրորի
մասին լրագիրներից հանված կտորներ կան,
նահատակ գյուղացիների, քաղաքական բան-
տարկյալների պատկերները, ամսագրեր, գլը-

քեր: Կոռպերատիվի թեյատանը Մ Ո Պ Ր-ի մա-
սին զրույցներ են կազմակերպվում, անգրա-
գետների համար կարդում են Մ Ո Պ Ր-ի ամսա-
գիրը և զանազան զեկուցումներ են լինում»:

Սոսք չկա—կան բջիջներ, ուր գործունյա
մարդիկ կան հավաքված, ու դրանք քաղաքի
բջիջներից շա՛տ ավելի լավ են աշխատում: Ա՛յ
որինակ. չեմ հիշում Վյատկայի նահանգի վոր
գավառում, մի շրջանի գյուղացիները փող են
հավաքել ե մի մանկատուն շինելու Բեսարա-
բիայի և Բուլղարիայի այն գյուղացիների վոր-
բերի համար, վորոնց դահիճները տանջանքի
յեն մատնել արդար գործի պայքարում: Իսկ
Յեկատերինոսլավի մի նահանգ չեֆություն ե
վերցրել լեհական մի բանտի, ուր 25 բանվոր ու
գյուղացի քաղաքական բանտարկյալներ կան
և ամեն մեկի համար ամսական 10 ռուբլի յե
ուղարկում բանտին:

Պարզ բան ե բջիջը կազմակերպելու հենց
առաջին սրից կանոնավոր աշխատանք չի լինիլ.
բայց յեթե յեռանդոտ մարդ ե, լքանելու կարիք
չկա, պետք ե աշխատել և գործը կարգի գցել:
Իսկ գյուղացիների վերը բերած նամակներից,
յերևում ե թե ինչքան շատ բան կարելի յե ա-
նել, յեթե մարդ սրտով կալչի գործին:

ՄՈՊՐ-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ


1. Լսեք Կոմյերիտականներ 55 էջ 20 կոպ.
2. Ա. ՄԱՐՏԻ. Ֆրանսիական Հանրապետության բանտերում 73 էջ 30 կոպ.
3. Ի՞նչ է ՄՈՊՐ-ը 18 էջ 15 կոպ.
4. ՄԱՐՏԻՆՈՎ. ՄՈՊՐ-ը չեմ շեփուկությունը 16 էջ 5 կոպ.
5. ԳՈՐՆԵՎ. Ինչ պետք է գիտենա ամեն մի գյուղացի 12 էջ 5 կոպ.
6. ԳԵՅԼԵՐ. Ո՞ւմ չեմ ի՞նչպես է ոգնում ՄՈՊՐ-ը 14 էջ 5 կոպ.
7. ՏԱՐԱԿԱՆՈՎԱ. Գեղջկուհի մտիր ՄՈՊՐ-ի շարքերը 16 էջ 5 կոպ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. ՄԵՆԿՈՎ. Ինչպես են ապրում գյուղացիները կապիտալիստական յերկրներում.
2. ԳԵՅԼԵՐ. ՄՈՊՐ-ը Խորհրդային Միության մեջ.

Պատվերները ուղղել ՄՈՊՐ-ի Հայաստանի կենտրոնական Կոմիտե

Արտվյան փող. հո. 34 (հեռախոս հո. 309)



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0038287

[024]

4040 5 4040.

A $\frac{1}{4040}$